Բեռնափոխադրման և տրանսպորտային ծառայության պայմանագիր N 181

ք. Երևան 19 նոյեմբերի 2020թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Լեգարա» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ տնօրեն Արմեն Ասլանյանի, մյուս կողմից միասին հիշատակվելու դեպքում՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից նախապես ներկայացված պատվերի հիման վրա իրականացնել բեռնափոխադրման և տրանսպորտային ծառայություններ:

1.3 Պատվիրատուի կողմից պատվերը տրվում է նախապես հեռախոսազանգով, բանավոր, ինչպես նաև՝ էլեկտրոնային փոստով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1 Պատվերն իրականացնելու համար տրամադրել պիտանի և սարքին տրանսպորտային միջոցներ, որոնք համապատասխանում են սահմանված նորմերին,

2.1.2 Բեռնափոխադրման պատվերի դեպքում բեռը հասցնել նշանակման վայր,

2.1.3. Ծառայությունները մատուցել ժամանակին, պատշաճ և ամբողջ ծավալով,

2.2. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունների մատուցման համար վճարել Պայմանագրի պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին 10 (տասը) աշխատանքային օր առաջ տեղեկացնելով, ինչպես նաև՝ վճարել սահմանված գումարի այն մասը, որը համապատասխանում է մատուցված ծառայությունների չափին մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Պայմանագրի գինը որոշվում է համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սակագների:

3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրի գինը վճարվում է Կատարողի կողմից ներկայացված հարկային հաշիվների (և) կամ հաշիվ վավերագրերի հիման վրա՝ Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Ամսական կտրվածքով դուրս գրված հարկային հաշիվների (և) կամ հաշիվ վավերագրերի դեպքում վճարումը կատարվում է հարկային հաշիվները (և) կամ հաշիվ վավերագրերը ներկայացնելուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ յուրաքանչյուր ծառայության համար դուրս գրված հարկային հաշիվների (և) կամ հաշիվ վավերագրերի դեպքում վճարումը կատարվում է հարկային հաշիվները (և) կամ հաշիվ վավերագրերը ներկայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Պատվիրատուն պարտավորվում է վճարել պայմանագրի՝ գնառաջարկով ներկայացված գնի 50%-ը՝ որպես կանխավճար:

3.4 Հարկային հաշվում (և) կամ հաշիվ վավերագրում Պատվիրատուի ցանկությամբ նշվում են երթի ուղղություն(ներ)ը, հեռավորությունը՝ կմ-երով և մեկ կմ-ի արժեքը՝ համաձայն Պայմանագրի 3.1 կետում նշված սակագների:

4. Պայմանագրի գործողության ժամկետը և լուծման կարգը

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020թ. նոյեմբերի 19-ից և գործում է մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

4.2 Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է պահանջել Պայմանագրի դադարեցում՝ 10 (տասը) օր առաջ տեղեկացնելով մյուս կողմին: Պայմանագրի գործողության դադարումը չի ազատում Կողմերից որևէ մեկին մինչև դադարեցման պահը ստանձնած պարտավորությունների կատարումից:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը «ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»

6.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Վեճերի լուծման կարգը

7.1 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 հավելվածը համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող՝ «Լեգարա» ՍՊԸ	Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Հասրաթյան 13/5 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/h 163008103018 ՀՎՀՀ 00854105	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/h 1570027609970100 ՀՎՀՀ 01501898
Տնօրեն՝ _____ Արմեն Ասլանյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ _____ Մուշեղ Միլիտոնյան (ստորագրություն)

Հավելված 1
19.11.2020թ.-ին կնքված
Բեռնափոխադրման և տրանսպորտային
ծառայության N 181 պայմանագրի

մատուցվող ծառայությունների սակագներ

հ/հ	Բ/Մ	1-6 կմ մինիմալ (ՀՀ դրամ)	1 կմ (ՀՀ դրամ)	40 կմ-ից ավելի (ՀՀ դրամ)	Սպասելավարձ 1 ժամվա համար (ՀՀ դրամ)
1.	Գազել-1.6տ	3000	300	200	1200
2.	Գազել (5մ)-1.6տ	4000	400	300	1500
3.	Գազ53 (4մ)-3.5տ	5000	500	500	1500
4.	Գազոն-Նեկստ (5մ)-5տ	5000	500	500	1500
5.	Գազոն-Նեկստ (6մ)-6տ	6000	600	600	2000
6.	ՋԱԿ (6մ)-7տ	6000	600	600	2000
7.	ՋԱԿ (7մ)-8.5տ	8000	800	700	2000

Ավտոբուսները և միկրոավտոբուսները տրամադրվում են՝ ըստ պայմանավորվածության:

- Սպասելավարձը 30 րոպեի համար անվճար է:
- Սակագների մեջ ԱԱՀ-ն ներառված չէ:

Կատարող՝
«Լեգարա» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Հասրաթյան 13/5
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/հ 163008103018
ՀՎՀՀ 00854105

Տնօրեն՝

_____ **Արմեն Ասլանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Պատվիրատու՝
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

Տնօրեն՝

_____ **Մուշեղ Միլիտոնյան**
(ստորագրություն)
Կ.Տ.